

Վարդան Զ. Պետրոսյան
Բանաս. գիտ. թեկնածու

**ՈՉ ԵՐԿԱՐՔԱՌԱՅԻՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ
ԵՐԿԱՐՔԱՌԱՎԵՐՊԵՐԸ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**
(տարածամանակյա և ապաժամանակյա հայեցակերպեր)*

Բանալի բառեր – երկբարբառակերպ, հիմք-լեզու, ոչ երկբարբառային նախաձև, իրանական փոխառություն, վաղնջահայերեն, հնչյունափոխություն, հնչույթակապակցություն, հայերենագիտություն, տարածամանակություն, ապաժամանակություն:

Մուտք

Հին հայերենն ուներ տասնհինգ երկբարբառակերպ¹, որոնցից միայն վեցն էին սերում հ.-ե. երկբարբառային համակարգից (հմմտ. *աւ* (աւ), *եւ* (եւ), *իւ* (իւ), *ու* (օւ), *այ* (աի), *ոյ* (օի)): Մյուսները կազմավորվել են հ.-ե. հիմք-լեզվից հայերենի առանձնանալուց հետո, որպես ինքնուրույն լեզու՝ նրա նախագրային շրջանի ավելի քան երկուհազարամյա պատմության հոլովոյթում և իրենցից ներկայացնում են հնչյունափոխական (իմա՝ հնչույթափոխական) տարբեր գործընթացների արդյունք: Այդ երկբարբառակերպերն էին՝ *աւ* (աւ), *եւ* (եւ), *իւ* (իւ), *ու* (օւ), *յա* (իա), *յե* (իե), *յի* (իի), *յո* (իօ): Դրանք ծագումնաբանորեն երկու կարգի են. 1) հ.-ե. ոչ երկբարբառային նախաձևերից սերած երկբարբառակերպեր, 2) իրանական փոխառությունների հայերենյան հնչյունափոխությունների արդյունքում առաջացած երկբարբառակերպեր:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.03.2024:

1 Հին հայերենի երկբարբառակերպերի համաժամանակյա քննությունը տե՛ս Պետրոսյան Վ., Հին հայերենի երկբարբառային և եռբարբառային կազմությունների հարցի շուրջ (համաժամանակյա հայեցակերպ), ԲԵՀ. Բանասիրություն, 2023, N 1, էջ 57-67 հոդվածում:

1. Հնդեվրոպական ծագում ունեցող երկրաբառակերպերը

Հ.-ե. ոչ երկրաբառային նախաձևերից սերում են հին հայերենի հետևյալ յոթ երկրաբառակերպերը:–

Իա (ա) երկրաբառակերպը հանդիպում է. ա) բնիկ հնդեվրոպական փոքրաթիվ բառերի կազմում (հմմտ. **աւազ** «ավազ, հող, փոշի» (< հ.-ե. ***sabh-** (+ **-uq** (?))` ***bhes-** ից «տրորել, մանրացնել»)²,– **հիւանդ** «հիվանդ» (< ***pēpntō-**` ***pē(i)-** «ցավեցնել, վնասել»)³,– **աւանդ** I. «ավանդ, ավանդութուն, սովորություն, գաղտնիք» (< ***o-b^hend^h-**` ***b^hend^h-** «կապել» արմատից), բ) հնդեվրոպական, մասնավորապես իրանական լեզուներից կատարված փոխառություններում (հմմտ. **նաւազ** «նավավար» – ավ. **navāza-**, պրթ. ***nāvāz** ⁴,– **գաւազ** «կենդանու (հատկապես ձիու) հետնամաս» (< հ.-ե. ***gau-** «թեթել, ծռել»)⁵,– **աւանդ** II. «գլխավոր քաղաք» – պրսկ. **avand**⁶,– **գաւազան** «ծեծելու փայտ, հարված» – իրան. ***gāvazan**. ավ. **gavaza-**, պրսկ. **gāvzana**⁷,– **հաւան** II. «սանդ» – ավ. **hāvana-**, մպրսկ. **hāvan**, պրսկ. **hāvan** կամ **havān**⁸,– **հաւասար** «հավասար, նման, միատեսակ, ընդհանուր» – իրան. ***hāvasār**, պրթ. ***hāv(a)sār** և այլն)⁹, ինչպես նաև հունարենից փոխառված **գաւաթ** «բաժակ» (< **φάβῶθα** «ափսե՝ խոր պնակ, թաս կամ չանաղ») բառի կազմում¹⁰: **Իա** երկրաբառակերպն առկա է նաև **աւազ**, **հաւանի** «արու, որձ (կամ ընկեր)», **հաւանի** «գետառ, մայր գետ», **հաւաստի** «գոտու ծոպերը կամ ուրիշ մասերը»¹¹ և որոշ այլ բառերում, որոնք դեռևս ստուգաբանված չեն:

2 Տե՛ս **Զահուկյան Գ.**, Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետև՝ ՀՄԲ), Եր., 2010, էջ 98:

3 Տե՛ս **Աճառյան Հ.**, Հարերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀՄԲ), հատ. IV, Եր., 1979, էջ 634–635, **Զահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 461:

4 Տե՛ս **Հյուբշման Հ.**, Հայերենի քերականություն (այսուհետև՝ ՀԲ), Եր., 2003, էջ 201, **Աճառյան Հ.**, ՀՄԲ, III, էջ 434, **Զահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 563:

5 Ըստ Գ. Զահուկյանի՝ պիտի լինի իրանական փոխառություն, բայց բուն աղբյուրը չի նշվում (տե՛ս **Զահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 152): Հ. Աճառյանը չի ստուգաբանում (տե՛ս **Աճառյան Հ.**, ՀՄԲ, I, էջ 526):

6 Տե՛ս **Աճառյան Հ.**, ՀՄԲ, I, էջ 354, **Զահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 99:

7 Տե՛ս **Հյուբշման Հ.**, ՀԲ, էջ 126, **Աճառյան Հ.**, ՀՄԲ, I, էջ 526, **Զահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 152:

8 Տե՛ս **Հյուբշման Հ.**, ՀԲ, էջ 180, **Աճառյան Հ.**, ՀՄԲ, III, էջ 68–69, **Զահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 453:

9 Տե՛ս **Աճառյան Հ.**, ՀՄԲ, III, էջ 69, **Զահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 454:

10 Տե՛ս **Աճառյան Հ.**, ՀՄԲ, I, էջ 526, **Զահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 152:

11 Տե՛ս **Աճառյան Հ.**, ՀՄԲ, III, էջ 70, **Զահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 454:

Օրինակներից երևում է, որ հյ. **ւա** (ւա) երկբարբառակերպյալ արտացոլում է հ.-ե. *b^he, *p(a), իրանական լեզուների **va, vā** և հունարենի **βά** (ba) հնչյունակապակցությունները, որոնցում էականը հյ. **ւ** (ւ) ձայնորդի համապատասխանությունն է նշված հնչյունակապակցությունների բաղաձայնական բաղադրիչներին: Այդ համապատասխանությունների օրինաչափ բնույթը համեմատական լեզվաբանության մեջ հաստատված է վաղուց: Այդ խնդրին անդրադարձել ենք նաև մենք հին հայերենի **ւ** (ւ) ձայնորդի հնչաբանական բնութագրերի քննության առնչությամբ¹², ուստի լրացուցիչ քննության անհրաժեշտություն չենք տեսնում: Հ.-ե. վանկարար ձայնորդները դուստր լեզուներում ունեն ձայնավոր, «ձայնորդ + ձայնավոր», «ձայնավոր + ձայնորդ» կամ «ձայնավոր + ձայնորդ + ձայնավոր» (վերջինը՝ հին հունարենում՝ որպես հ.-ե. երկար վանկարար ձայնորդների համարժեք, օր.՝ **αρα, αρα**, և ավեստայում՝ **ərə** (< *r/l)) կապակցություն համապատասխանություններ¹³: Հետևաբար օրինաչափ է նաև հ.-ե. *p(n) > հյ. **ւ-ա(ն)** անցումը (հմմտ. *pēpnō- > **հիւանդ** «հիվանդ»):

Խա (ւա) երկբարբառակերպի առկայությունը բնիկ հնդեվրոպական բառերում վկայում է, որ այն հայերենի հնագույն իրողություններից է, կազմավորվել է հ.-ե. հիմք-լեզվից հայերենի առանձնանալուց հետո՝ ինքնուրույն պատմության վաղ փուլերում:

Խա (ւա) երկբարբառակերպը նույնպես հանդիպում է երկու կարգի բառերում. ա) բնիկ հնդեվրոպական (հմմտ. **աւել** II. «ավելի» (< *ob^hel- «ավելացնել»): հուն. **ὀφέλλω** «ավելացնել, շատացնել, մեծացնել»¹⁴, - **աւետ** (նաև՝ **աւէտ**) «ուրախ լուր, բարև» (< *aueð-՝ *aueid- «խոսել»): հինդկ. **vadati**, հուն. **αύδη** «խոսք, ձայն»¹⁵, - **նաւել** «նավարկել»՝ կազմված «նաւ (< *nāu-) + -ել» կաղապարով. հինդկ. **nāu-** «նավ, մակույկ», հուն. **ναύς**, լատ. **nāvis**)¹⁶. բ) իրանական փոխառություններում (հմմտ. **աւեր** «ավերած, քան-

12 Տե՛ս **Պետրոսյան Վ.**, Հին հայերենի **ւ** (ւ) ձայնորդի համաժամանակյա և տարաժամանակյա բնութագրերը ԲԵՀ. Բանասիրություն, 2017, N 3, էջ 11-22:

13 Տե՛ս **Meise A.**, Введение в сравнительное изучение в индоевропейских языков, М.-Л., 1938, էջ 131, **Meillet A.**, Esquisse d'un grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936, էջ 42-44, **Селищев А.**, Старославянский язык, ч. 1, М., 1951, էջ 160-166, **Савченко А.**, Сравнительная грамматика индоевропейских языков, М., 1974, էջ 76-80, **Семереньи О.**, Введение в сравнительное языкознание, М., 1980, էջ 57-62, **Красухин К.**, Введение в индоевропейское языкознание, М., 2004, էջ 67-70:

14 Տե՛ս **Ջահուկյան Գ.**, ՀԱԲ, էջ 100-101:

15 Տե՛ս **Ջահուկյան Գ.**, ՀԱԲ, էջ 101:- Հ. Աճառյանը չի ստուգարանել (տե՛ս **Աճառյան Հ.**, ՀԱԲ, I, էջ 358-359):

16 Թեպետև **նաւ**-ը պատկանում է հայերենի բնիկ հնդեվրոպական շերտին, ինչպես և ցեղակից լեզուներում, բայց այդ հիմքով բաղադրությունները, որպես կանոն, իրանական փոխառություններ են (հմմտ. **նաւագ**, **նաւապետ**. տե՛ս **Աճառյան Հ.**,

դված, ավերակ» – մպրսկ. **avērān** «ավերված, քանդված», պրսկ. **vērān** «ավեր»¹⁷,– **դաւել** «դավ նյութել, նենգել, խաբել»՝ կազմված «դաւ + -ել» կաղապարով. ավ. **dab-** «խաբել», **daβ** «դավ, խաբեություն»¹⁸,– **վաւեր** «ստույգ, հաստատուն». իրան. ***vāwar**. մպրսկ. **vāvar, vāwar (/vāpar)** «հավատալի, ստույգ», պրսկ. **bāvar** «հավատ, հավատալը, վավերական», աֆղ. **bāvarī**. «կազմված է **var** արմատից՝ **upā** (որ է **upa** + **ā**) մասնիկով». հմմտ. ավ. **vārūpa**, պրսկ. **avar**, մպրսկ. **ēvar** «հավատալի, ստույգ»¹⁹):

Ըստ վերոհիշյալ զուգահեռների՝ հյ. **ւե** (ւք) երկբարբառակերպն ունի հ.-ե. ***b^he**, ***ʷe**, հուն. **φέ, ύ(δ)η**, հինդկ. **va**, իրան. **vē, va, wa, b-, β-** համարժեքները: Դարձյալ մի կող թողնելով ձայնավորի համապատասխանությունների հարցը՝ տեսնում ենք, որ ընդհանուր առմամբ հյ. **ւ** (ւք) կիսաձայնն ունի նույն համարժեքները, ինչ որ **ւա** (ւք) երկբարբառակերպի դեպքում էր: Ինչ վերաբերում է **ւե** (ւք) երկբարբառակերպի առաջացման ժամանակի հարցին, ապա նրա առկայությունը հ.-ե. ծագման թեկուզև սակավաթիվ բառերի կազմում վկայում է, որ այն ևս սկիզբ է առնում հայերենի ձևավորման վաղ շրջանից:

Իո (ւօ) երկբարբառակերպը հանդիպում է. ա) **ո-ա** (օ-ա) խառն հոլովման ենթարկվող որոշ բառերի եզ. թ. տրական (հմմտ. **այգի-այգւոջ** «այգու(ն)», **գինի-գինւոջ** «գինու(ն)», **դալարի** «կանաչ խոտ, արոտ» – **դալարւոջ** «արոտի(ն)», **դրանդի** «դռան շեմք» – **դրանդւոջ** «շեմքի(ն)»²⁰, **ծղխնի-ծղխնւոջ** «ծխնու(ն)», **կղզի-կղզւոջ** «կղզու(ն)», **ջորի-ջորւոջ** (նաև՝ **ջորւոյ**) «ջորու(ն)», **տամալի** «հարթ տանիք» – **տամալւոջ** «տանիքի(ն)», **տարի-տարւոջ** «տարվա(ն)», **տեղի-տեղւոջ** «տեղի(ն)» և այլն)²¹, իսկ դրանցից որոշների՝ նաև բացառական հոլովի ձևերում (հմմտ. **ի տարւոջէ** «տարվանից», **ի տեղւոջէ** «տեղից»). բ) **ո** (օ) արտաքին հոլովման ենթարկվող **-ի** վերջով բառերի հզն. թ. սեռ.-տր., բցո. և գործ. հոլովաձևերում (հմմտ. **անդի (/անդեայ)** «նախիր, ջոկ» – **յանդւոջ** «նախիրներից»

ՀԱԲ, III, էջ 432,– **Ջահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 563): Սակայն, ըստ իս, անորոշի **-ել** մասնիկը վկայում է **նաւել** ձևի հայկական կազմություն լինելու մասին՝ **նաւ** (< ***nāu-**) + **-ել**:

17 Տե՛ս **Հյուբշման Հ.**, ՀՔ, էջ 112, **Աճառյան Հ.**, ՀԱԲ, I, էջ 359, **Ջահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 101:

18 Տե՛ս **Հյուբշման Հ.**, ՀՔ, էջ 138, 438, **Աճառյան Հ.**, ՀԱԲ, I, էջ 641, **Ջահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 189: Ըստ Գ. Ջահուկյանի՝ իրանական ձևերի աղբյուրը կարող է լինել հ.-ե. ***dhabh-** նախաձևը (**Ջահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 189):

19 Տե՛ս **Հյուբշման Հ.**, ՀՔ, էջ 100, **Աճառյան Հ.**, ՀԱԲ, IV, էջ 327, **Ջահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 708:

20 Տե՛ս **Առաքելեան Վ.**, Գրաբարի քերականութիւն, Եր., 2010, էջ 64:

21 **Դալարի** և **ջորի** գոյականներն ունեն եզ. տր. նաև **դալարւոյ** և **ջորւոյ** ձևերը, որոնցում առկա է **ւոյ** եռաբարբառակերպ:

(հզն. բցռ. հլ.), **հոգի** – **հոգւով** (եզ. գործ. հլ.), **ոսկի** – **ոսկւով** «ոսկիով» (եզ. թ., գործ. հլ.), **որդի-որդւոց** «որդիների» (հզն. թ., սեռ.-տր. հլ.), – **յորդւոց** «որդիներից» (հզն. թ., բցռ. հլ.), **ասորի** – **ասորւոց** «ասորիների» (հզն. թ., սեռ.-տր.), **հռովմայեցի** – **հռովմայեցւոց** և այլն)²²: Նշված հոլովական ձևերում **ւո** (ւօ) երկբարբառակերպի **ւ** (ւ)–ը բնի ձայնավորից՝ **ո**–ից, առաջ **ի**–ի հնչյունափոխության արդյունք է՝ **ի** > **ւ**: Հետևաբար, **ւո** երկբարբառակերպն առաջացել է «(–**ի** վերջ >) **ւ** + բնի **ո** ձայնավոր» կաղապարով: Ըստ այդմ, անկախ վերոհիշյալ բառերի ծագումնաբանությունից (նրանց մեջ անպայմանորեն կան բնիկ հնդեվրոպական բառեր. հմմտ. **այգի** (< ***ayg**) «խաղողի պարտեզ. խաղողի որթ» (< ***oiǵā** «լեռնային մանր պտուղ՝ մոշի, ելակի պես». հուն. **οἴη**, **οῖα** «սնձնի», լատ. **uva** «խաղող», հ. վ. գերմ. **iwa** և այլն)²³,– **գինի** (< ***ǵoino**– «գինի». խեթ. **uiana**– «գինի», հուն. հուն. **οἶνος** «գինի», լատ. **vinum** «գինի», գոթ. **wein** «գինի», հ. վ. գերմ. **wīn** «գինի» և այլն)²⁴,– **դրանդի** (**անդ** «սյամ, շեմք» ձևից, որն առանձին չի գործածվել. ցեղակիցներն են. սնսկ. **átā** «դռան շրջանակը», ավ. **aiðyā** «դռան ցիցիերը կամ գերանները», լատ. **antae** «դռան երկու կողմերի սյուները», հիսլ. **and** «նախասենյակ»)²⁵,– **հոգի** (< ***pouiiǵ**–' ***pəu**–, ***pau**– «փչել, ուռչել» արմատից)²⁶,– **որդի** (< ***portiiǵ**–' ***per**– «ծնել». սնսկ. **pr̥thuka**– «ձագ. մանուկ, տղա», հուն. **πóρτις** «1. երինջ, ցլիկ. 2. փոքր տղա կամ աղջիկ», լատ. **partus** «զավակ, ձագ»)²⁷ և այլն),– **ւո** (ւօ) երկբարբառակերպը հայերենյան իրողություն է և որքանով որ հանդես է գալիս քերականական, տվյալ դեպքում՝ հոլովական ձևերում, պիտի կազմավորված լինի նախագրային հայերենի՝ որպես ինքնուրույն լեզվի ձևավորման վաղ փուլերում:

Յա (ia) երկբարբառակերպը հանդիպում է եռակի գործառնությունով. 1) բառի սկզբնաբաղադրիչ հնչյունակապակցություն է (հմմտ. **յազ** «կշտանալը, լիություն», **յազ** «զոհ, զոհաբերություն», **յախուն** «անխորհուրդ, հանդուգն», **յարդ** «հարդ, դարման», **յարկ** «թակարդ, որոգայթ», **յարմար** «պատշաճ, վայելույշ» և այլն). 2) **ա** լծորդության բայերի անց. անկ. Ժ. հզն. թ. 1–ին դ. վերջավորության բաղադրիչ է, այլ կերպ՝ մասնակցում է

22 Առհասարակ՝ **-ցի** վերջածանցն ունեցող և որտեղացի լինելը ցույց տվող բառերի հզն. թ. սեռ.-տր. և բցռ. հոլովածներում, ինչպես՝ **քանանացի-քանանացւոց**, **քաղղեացի-քաղղեացւոց** և այլն:
 23 Տե՛ս Աճառյան Հ., ՀԱԲ, I, էջ 166, Զահուկյան Գ., ՀԱԲ, էջ 48:
 24 Տե՛ս Հյուրջման Հ., ՀՔ, էջ 434-435, Աճառյան Հ., ՀԱԲ, III, էջ 558-559, Զահուկյան Գ., ՀԱԲ, էջ 161, Գամքրելիզե Թ., Իվանով Բյաչ., Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Тбилиси, 1984, էջ 647:
 25 Տե՛ս Հյուրջման Հ., ՀՔ, էջ 419, Աճառյան Հ., ՀԱԲ, I, էջ 186:
 26 Տե՛ս Գ. Զահուկյան, ՀԱԲ, էջ 464:
 27 Տե՛ս Աճառյան Հ., ՀԱԲ, III, էջ 576, Զահուկյան Գ., ՀԱԲ, էջ 606:

քերականական, տվյալ դեպքում՝ խոնարհման քերականական իմաստի արտահայտմանը (հմմտ. **աղայսք** «(մենք) աղում էինք / աղացվում էինք», **գոյսք** «(մենք) կայինք, գոյություն ունեինք», **մնայսք** «(մենք) մնում էինք», **յուսայսք** «(մենք) հույս ունեինք», **ջանայսք** «(մենք) ջանում էինք» և այլն). կառուցվածքային առումով **ա** լծորդության բայերի անկատարի **յա**-ն իրենից ներկայացնում է «-յ + -ա(-ք)» կաղապարը²⁸. 3) **ա**- սկիզբով բառերի (գոյական, թվական, դերանուն) բացառական հոլովածնի սկզբնաբաղադրիչ է, որն ունի «յ նախդիր + բառակցքի **ա** ձայնավոր» կաղապարը:

Առաջին կարգի բառերը ներկայացնում են 3 խումբ. ա) բնիկ հնդեվրոպական բառեր (հմմտ. **յագ** «կշտանալը, լիություն» (< *sāy-՝ *sā-, *sə- «կշտացնել»), **յածիլ** «պտույտ գալ» (կազմված է **ած**- արմատից՝ **յ** նախդրով. լատ. **agmen** «շարժում, ընթացք», **agilis** «շարժուն» (< *agō «ածել» արմատից)²⁹, - **յանգ** «վերջ, ծայր, եզր» (կազմված է **անկ**- արմատից՝ **յ** նախդրով. < *sngu-՝ *sengu- «ընկնել, իջնել». հուն. **ἔαφθ** «ցած ընկավ», գոթ. **sigqan**, հ. վ. գերմ. **sinkan** և այլն),- **յատակ** «տակ, խորքը, գետին» (< *pedo- «ոտք» բառից)³⁰, - **յար** «կից, կցված, կողք կողքի միացած» (կազմված է **ար**- արմատից (< *ar- «կցել, միացնել»)՝ **յ** նախդրով),- **յարմար** «պատշաճ, վայելույշ» (կազմված է **ար**- արմատից (< *ar- «կցել, միացնել»)՝ **յ** նախդրով և **մ** աճականով)³¹ և այլն). բ) փոխառություններ

28 Ըստ իս, անկատարի ձևերում ձայնակապի գործառույթ իրականացնող **յ**-ն, որ **յա** երկբարբառակերպի առաջին բաղադրիչն է, հին հայերենի բառի կառուցվածքին բնորոշ՝ բառավերջի դիրքում **ա**, **ո** ձայնավորները եզրավակող կիսաձայնն է: Անկատարի ձևերից բացի (հմմտ. անց. անկ. ժ., եզ. թ., 1-ին դ. **մնա-յ-ի** «(ես) մնում էի», 2-րդ դ. **մնա-յ-իր** «(դու) մնում էիր», հգն. թ. բոլոր ձևերում. **մնա-յ-ար** «(մենք) մնում էինք», **մնա-յ-իրք** «(դուք) մնում էիք», **մնա-յ-ին** «(նրանք) մնում էին», **գո-յ-ին** «(նրանք) կային»), այդ հնչյունը կա նաև սահմ. նրկ., եզ. թ., 3-րդ դ. ձևում (հմմտ. **մնայ** «(նա) մնում է», **գոյ** «(նա) կա»): Կարծում ենք՝ հոգուտ ասվածի է վկայում այն իրողությունը, որ այդ **յ**-ն կա նաև անց. անկ. ժ., եզ. թ., 3-րդ դ., ուր այն երկու ձայնավորի միջև չէ, այլ ձայնավորի և ձայնորդի (հմմտ. **մնա-յ-ր** «(նա) մնում էր», **գո-յ-ր** «(նա) կար») և չունի ձայնակապի գործառույթ: Հետևաբար միանշանակ չէ պնդումը, թե անց. անկ. ժ.-ում հանդես եկող **յ**-ն չի վերագրվում բուն վերջավորությանը (տե՛ս **Туманян Э.**, Древнеармянский язык, М., 1971, էջ 348, - **Բրբահամյան Ա.**, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 116-117), որքան էլ որ «անկատարի վերջավորության ո՛չ ծագումնաբանությունը, ո՛չ էլ կառուցվածքային բնութագիրն ամբողջությամբ պարզ չէ» (տե՛ս **Туманян Э.**, նշվ. աշխ., էջ 348-349): Անց. անկ. վերջավորության մասին տե՛ս **Պետրոսյան Վ.**, Հին հայերենի երկբարբառային և եռաբարբառային կազմությունների հարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», 2023, N 1, էջ 59, ծնթգր. 5:

29 Տե՛ս **Աճառյան Հ.**, ՀԱԲ, III, էջ 378, **Ջահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 545:

30 Տե՛ս **Աճառյան Հ.**, ՀԱԲ, III, էջ 386, **Ջահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 548:

31 Տե՛ս **Աճառյան Հ.**, ՀԱԲ, III, էջ 389, **Ջահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 549:

31 Տե՛ս **Աճառյան Հ.**, ՀԱԲ, III, էջ 389, **Ջահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 549:

(հմմտ. **յազ** «զոհ, զոհաբերություն» (< մայրսկ. **yazēm** «պաշտեն»), **յաթ** «տարր, նախանյութ» (< ասոր. **yāṯā** «գոյություն, նյութ, իսկություն»),- **յակիհթ** «ընտիր մի ակունք» (< հուն. **ύάκιϐθος** «հակիհթ քարը և ծաղիկը»),- **յարկ** «թակարդ, որոգայթ» (< հուն. **άρκυσ** «թակարդ, որսի ցանց») և այլն)³². գ) դեռևս չստուգաբանվածներ (հմմտ. **յախունն** «անխորհուրդ, յանդուգն», **յաճախ**, **յամ** «ուշ, կամաց, դանդաղ», **յամայր** «երկար, շատ», **յամառ** «կամապաշտ, պնդագլուխ», **յափրիլ** «զեղխանալ, լրբիլ» և այլն)³³: Երրորդ խմբի բառերը մեզ հետաքրքրող հարցի տեսանկյունից կարևորություն չունեն, որքան էլ որ նրանց թիվը ամենից մեծն է, որովհետև որևէ կերպ չեն նպաստում հարցի հանգուցալուծմանը: Հիմնահարցի հանգուցալուծման առումով կարևոր են հատկապես բնիկ հնդեվրոպական ծագման բառերը, որովհետև դրանցում **յա**-ի առկայությունն արդեն իսկ հայերենում այդ երկբարբառակերպի բնիկ լինելու փաստարկ է: Փոխառությունների դերը կարևոր կլինեն, եթե չլինեին հ.-ե. ծագման՝ **յա** երկբարբառն ունեցող բառեր:

Մյուս կողմից, երկրորդական չէ նաև բայաձևերի ծագումնաբանության հարցը: Նշված բոլոր 3 բայաձևերն էլ ունեն հ.-ե. ծագում (հմմտ. **աղամ** «աղալ, մանրել, փշրել» (< ***al-** «մանրացնել». հուն. **ἀλέω** «աղալ», ավ. **aša-** (< ***atra-**) «աղացված», մայրսկ. **ārtan** «աղալ» և այլն)³⁴,- **գոմ/գոյ** (որից՝ **գոյաթ**) «էություն. գոյացություն. եղած բան» (< ***ues-** «մնալ, բնակվել». սնսկ. **vásati** «բնակվել, գիշերել», գոթ. **wisan** «լինել. մնալ», **was** «էի», հ. վ. գերմ. **wēsan** «լինել, գոյ լինել» և այլն)³⁵,- **մնամ** «մնալ, ետ կենալ, դադարել» (< ***men-**. սնսկ. **man** «հանգիստ սպասել», հայրսկ. **a-mān-aya** «սպասում էր», ավ. **upa-man-ayən** «մնան, կմնան», հուն. **μένω** «մնալ. Կանգնել, սպասել» և այլն):

Յա (ia) երկբարբառակերպի ծագումը որոշելու առումով ոչ պակաս կարևոր է այն բառերի ծագումնաբանության հարցը, որոնց վրա **յ** նախդիրը դրվում է բացառական հոլովածևը կազմելիս: Եթե դրվում է **ա**-սկիզբով բնիկ հնդեվրոպական բառերի վրա, այդքանն էլ բավարար է այդ առումով նույնպես **յա** երկբարբառակերպի կազմավորման մոտավոր ժամանակը որոշելու համար: Ըստ այդմ, հնդեվրոպական ծագում ունեն, օրինակ, հետևյալ գոյականները. **ալիւր** «այլուր. փոշի» (< ***al-** «աղալ»:

32 Վերը նշված փոխառությունների համար տե՛ս Աճառյան Լ., ՀԱԲ, III, էջ 376-389, Զահուկյան Գ., ՀԱԲ, էջ 545-549:

33 Չստուգաբանվածների համար տե՛ս Աճառյան Լ., ՀԱԲ, III, էջ 376-390, Զահուկյան Գ., ՀԱԲ, էջ 545-549:

34 Տե՛ս Աճառյան Լ., ՀԱԲ, I, էջ 118, Զահուկյան Գ., ՀԱԲ, էջ 32:

35 Տե՛ս Հյուբշման Լ., ՀՔ, էջ 435-436, Աճառյան Լ., ՀԱԲ, I, էջ 576:

հմնտ. հուն. *ἄλευρον* «ալյուր»³⁶. **յալերէ** (եզ. թ.), **յալերց** (հզն. թ.),- **ակն** «աչք» (< *ok²-n-. հինդ. *ākṣi* (սեռ. *akṣak*) «աչք», ավ. *aṣi* «աչք», լատ. *oculus*, հոմ. հուն. *ὄψ* «աչք», գոթ. *ahjan*, *augo* «աչք» և այլն)³⁷. **յականէ** (եզ. թ.), **յականց** (հզն. թ.),- **աղբեր** (-իւր) «աղբյուր» (< *bhrēy²- «ուժգին շարժվել, եռալ». հմնտ. հուն. *φρέαρ* «ջրհոր, ջրամբար», լատ. *fervo* «եռալ», հ. վ. գերմ. *brunno* և այլն)³⁸. **յաղբերէ** (եզ. թ.), **յաղբերց** (հզն. թ.),- **աղեղն** «աղեղ. ծիածան» (< *el- «ծռել, թեքել». հուն. *ωλένη*, լատ. *ulna*, բրետ. *ilin*, կիւր. *olwyan* «անիվ»)³⁹. **յաղեղանէ** (եզ. թ.), **յաղեղանց** (հզն. թ.),- **առն** «վայրի արու ոչխար» (< *r²sen «արու». հմնտ. հուն. *ἄρσην*, *ἄρρην* «արու. այր. Առնական», ավ., հայրսկ. *aršan* «այր», սնսկ. *ršabhá-* «ցուլ» և այլն)⁴⁰. **յառնէ** (եզ. թ.), **յառանց** (հզն. թ.),- **աստղ** «աստղ» (< *este(r)l- ? (< *stér). հմնտ. հուն. *ἀστῆρ*, խեթ. *ḫāster* «աստղ», վեդ. հնդկ. *strǵ-bhiḥ* (գործ. հլ., հզն. թ.), ավ. *star-*, մպրսկ. *stār*, լատ. *stēlla* (< *stēl-na), գոթ. *stairno* «աստղ» և այլն)⁴¹. **յաստեղէ** (եզ. թ.), **յաստեղց** (հզն. թ.):

Գոյականներից բացի, **յ** նախդրի հավելումով բացառականի հոլովածն են կազմում նաև **առաջին** դասական թվականը (հմնտ. **յառաջնոյ** / **յառաջնմէ՛**՝ եզ. թ., **յառաջնոց՛**՝ հզն. թ.) և **ամենայն** (հմնտ. **յամենայնէ՛**՝ եզ. թ.), **ամենեքին**, **ամենեքեան** (հմնտ. **Յամենեցունց՛**՝ հզն. թ.) որոշյալ դերանունները:

Բառասկզբի դիրքում **յա**-ի **յ**-ն, լինի այն բառի սկզբնաբաղադրիչ (այսինքն՝ իրականացնի հնչույթային գործառույթ), թե բացառականին բնորոշ հավելում, հիմնականում ունի նախդրային ծագում: Կարծում ենք՝ ծագումնաբանորեն նախասկզբնական է հ.-ե. *sā-/*sə-, *sn-/*sen-, *pe- ձևերից սերող **յա**- սկզբնաբաղադրիչը. ըստ ամենայնի, դրանցում հյ. **յ**-ն ներկայացնում է հ.-ե. բառասկզբի *s-ն և *p-ն⁴², չնայած որ այդ ձևերում

36 Տե՛ս **Հյուրքման** **Ը.**, ԸԲ, էջ 414, **Աճառյան** **Ը.**, ԸԱԲ, I, էջ 94, **Ջահուկյան** **Գ.**, ԸԱԲ, էջ 26:

37 Տե՛ս **Հյուրքման** **Ը.**, ԸԲ, էջ 413, **Աճառյան** **Ը.**, ԸԱԲ, I, էջ 107-108, **Ջահուկյան** **Գ.**, ԸԱԲ, էջ 30-31:

38 Տե՛ս **Հյուրքման** **Ը.**, ԸԲ, էջ 415, **Աճառյան** **Ը.**, ԸԱԲ, I, էջ 125, **Ջահուկյան** **Գ.**, ԸԱԲ, էջ 36:

39 **Ջահուկյան** **Գ.**, ԸԱԲ, էջ 36: Ը. Աճառյանը չի ստուգաբանում (տե՛ս **Աճառյան** **Ը.**, ԸԱԲ, I, էջ 126):

40 Տե՛ս **Աճառյան** **Ը.**, ԸԱԲ, I, էջ 261, **Ջահուկյան** **Գ.**, ԸԱԲ, էջ 75:

41 Տե՛ս **Հյուրքման** **Ը.**, ԸԲ, էջ 421, **Աճառյան** **Ը.**, ԸԱԲ, I, էջ 278, **Ջահուկյան** **Գ.**, ԸԱԲ, էջ 80,- **Гамкредлидзе Т., Иванов Вяч.**, նշվ. աշխ., էջ 685:

42 Հ.-ե. *s, *p > հյ. բառասկզբի **յ** (i) համապատասխանությունների մասին տե՛ս **Петросян В.**, Происхождение в древнеармянском языке сонорного звука j(y) и его фонематическая значимость (исторический аспект), European journal of Humanities and Social Sciences, 2017, N 5, с. 24-29,- **Պետրոսյան Վ.**, Հ.-ե. Կոկորդայինների ստույթունը և հին հայերենի խոլ շփական Հ (H)-ի հնչաբանական բնութագրերը

ևս, որպես կանոն, յ-ն նախդիր է, այլ ոչ թե արմատի մաս: Ինչ վերաբերում է բացառականի **յ** նախդրին, ապա այն հայերենյան իրողություն է և առաջացել է հայերենի՝ որպես ինքնուրույն լեզու կազմավորվելու վաղ փուլերում: Հին հայերենի բացառականի **յ (/հ)** նախդիրը չէր կարող անմիջականորեն սերել *h-*-ե. հիմք-լեզվից, որովհետև ինչպես *h-*-ե. մյուս հին լեզուների (հին հնդկերեն, հին հունարեն, խեթերեն, լատիներեն, հին պարսկերեն, ավեստա, հին իռլանդերեն, գոթերեն, հին սլավոներեն և այլն), այնպես էլ, բնականաբար, հիմք-լեզվի բացառականին (*ablativus*) բնորոշ չէր նախդրավոր կազմությունը:

Վերոհիշյալ քննությունը հիմք է տալիս ասելու, որ **յա** երկբարբառակերպը հայերենում բնիկ է. չի բացառվում, որ նրա կազմավորումն սկսվել է վաղնջափայտերենի փուլում:

Յե (*ie*) երկբարբառակերպը. 1) մի շարք բառերի սկզբնաբաղադրիչ է (հմմտ. **յևզեր** «պսակ, թագավորական պսակ», **յևղ** «փոխել, մեկ վիճակից մի ուրիշի դարձնել», **յևղկել** «նկատել, քննել», **յևռ** «ընդելուզված, կողք կողքի շարված՝ գամված», **յևտեկ** «պահեստային ձի» և այլն). 2) առկա է **հայիմ** բայի (**ի** լծորդ.) անցյալ կատարյալի (հմմտ. **հայեցայ** «(ես) նայեցի» (եզ. թ., 1-ին դ.), **հայեցար** (եզ. թ., 2-րդ դ.), **հայեցաւ** (եզ. թ., 3-րդ դ.), **հայեցարք** «(մենք) նայեցինք» (հզն. թ., 1-ին դ.), **հայեցայք** (հզն. թ., 2-րդ դ.), **հայեցան** (հզն. թ., 3-րդ դ.) և ստորադասական 2-րդ ապառնիի խոնարհման ձևերում (հմմտ. **հայեցայց** «(ես) նայելու եմ, նայեմ, կնայեմ, պիտի նայեմ» (եզ. թ., 1-ին դ.), **հայեսցիս** (2-րդ դ.), **հայեսցի** (եզ. թ., 3-րդ դ.), **հայեսցուք** «(մենք) նայելու ենք, ... » (հզն. թ., 1-ին դ.), **հայեսջիք** (հզն. թ., 2-րդ դ.), **հայեսցին** (հզն. թ., 3-րդ դ.))՝ որպես «արմատի **յ** վերջնաբաղադրիչ + (**ի** >) **ե** լծորդ ձայնավոր» կապակցություն. 3) **ե-** սկզբով բառերի բացառական հոլովածևի սկզբնաբաղադրիչ է՝ «**յ** նախդիր + **ե** ձայնավոր» կաղապարով:

Յե- սկզբնաբաղադրիչով բառերը ծագումնաբանորեն վերաբերում են 3 խմբի. ա) բնիկ հնդեվրոպական բառեր (հմմտ. **յևղ** (< ***g^hel-** «դառնալ, շարժվել». հհուն. **πέλω**, **πέλομαι** «շարժվել, առաջ գալ», լատ. **colo** «գրառվել. հողը մշակել, խնամել», սնսկ. **čarati** «շարժվել, դառնալ. գտնվել», հալավ. **коло** «անիվ» և այլն),- **յևղց** «լի, լեփ-լեցուն» (< ***pel-sk-**՝ **pel-** «թափել, լցնել» արմատից - ?)⁴³,- **յևռ** (< ***ser-s-** «իրար կողքի շարել, կապել, կապակցել». սնսկ. **sarat-** «թել», հհուն. **εἶρω** «կապել, կցել, միացնել»,

(ապաժամանակյա և տարաժամանակյա հայեցակետեր) // Հայագիտության հարցեր, 2022, N 1 (25), էջ 203:

43 Տե՛ս **Ջահուկյան Գ.**, ՀՍԲ, էջ 551: Հ. Աճառյանը չի ստուգաբանում (տե՛ս **Աճառյան Հ.**, ՀԱԲ, հատ. III, էջ 395): Հ. Հյուբշմանը կասկածով կապ է տեսել **հեղում** «թափել, լցնել» բայի հետ (տե՛ս **Հյուբշման Հ.**, ՀՔ, էջ 466):

լատ. **sero** «կապել, կցել», հիռլ. **sreth** «շարք» և այլն)). ք) փոխառություն (հմմտ. **յխտկ** (< թրք. **yedek-ից**)⁴⁴, – **յխտկար** «ձեռագիր. սուրհակ. երդման թուղթ» (< իրան. փոխ. սպարսկ. **ayātkār**, պրսկ. **yādgar**, պազ. **ayādagār** «հուշագիր, գեկուցագիր»)⁴⁵. գ) դեռևս չստուգարանված բառեր (հմմտ. **յեղկել** «նկատել, քննել»⁴⁶, **յեղմ** «մեղմ»⁴⁷, **յնիլ** «խառնվել»⁴⁸, **յնուլ** «հենվել, կռթնել»⁴⁹ և այլն):

Բացառական հոլովը «յ նախդիր + ե ձայնավոր» կաղապարով ձևավորող բառերի թվում նույնպես կան. 1) բնիկ հնդեվրոպականներ (հմմտ. **եզն** «եզ» (< ***eg’h-**, ***ag’h-** «խոշոր եղջերավոր անասուն». հինդկ. **ahē-** «կով», ալ. **azī** «երեք տարեկան կով», միռլ. **ag** «խոշոր եղջերավոր անասուն») ⁵⁰. **յեզանէ** (եզ. թ.), **յեզանց** (հզն. թ.), – **եզր** «սահման, վերջ» (<**eg’her(o)-** ***eg’h-** «եզր, սահման». լիտվ. **ėžeras**, լատիշ. **ezers**, հւլավ. **ezero** «սահման, սահմանագիծ», **jazǔ** «ջրանցք», հպրուս. **asy** «անտառի եզերք», փոյուգ. **Ezara** (տեղանուն) «լիճ» և այլն)⁵¹. **յեզերէ** (եզ. թ.), **յեզերց** (հզն. թ.), – **եղբայր** «եղբայր. կրոնավոր» (< ***b^hrāōtēr** / ***b^hrāōtōr** «եղբայր». սնսկ. **bhrāōtar-**, ալ. **brātar**, հուն. **φράτωρ** / **φράτηρ**, լատ. **frater**, գոթ. **brōþfar**, հւլավ. **brat(r)ǔ** և այլն)⁵². **յեղբարէ** (եզ. թ.), **յեղբարց** (հզն. թ.), – **եղն** «էզ եղջերու» (< ***elno-** (< ***el-** –**n-** աճականով). լիտվ. **ėlnis** «հյուսիսային եղջերու», **álné** «եղն», հւլավ. **jeleni** «եղջերու», ռուս. **елень** / **олень** «եղջերու», հուն. **έλλός** «եղնիկ», լատ. **alcē** «եղջերու», հիռլ. **elit** «եղնիկ» (“**ланы**”) և այլն)⁵³. **յեղանէ** (եզ. թ.), **յեղանց** (հզն. թ.), – **երգ** «երգ. բանաստեղծություն» (< ***erk^o**’ ***erk^o**’ «ձառագայթել. հնչել. երգել». հինդկ. **arká-** «երգ. նվագ», **r^ok-** (սեռ. **rčás**) «ոտանավոր, քերթված», իւեթ. **arkuuāc** «աղոթել») ⁵⁴. **յերգոյ** (եզ. թ.), **յերգոց** (հզն. թ.) և այլն). 2) փոխառու-

44 Տե՛ս Աճառյան Հ., ՀԱԲ, հատ. III, էջ 397 (ըստ Հ. Աճառյանի՝ «ձի եկեալ յետուստ»), Զահուկյան Գ., ՀՄԲ, էջ 552:

45 Տե՛ս Հյուրբման Հ., ՀԲ, էջ 198, Աճառյան Հ., ՀԱԲ, հ. III, էջ 397-398, Զահուկյան Գ., ՀՄԲ, էջ 552:

46 Տե՛ս Աճառյան Հ., ՀԱԲ, հատ. III, էջ 395, Զահուկյան Գ., ՀՄԲ, էջ 551:

47 Նույն տեղում:

48 Նույն տեղում:

49 Նույն տեղում:

50 Տե՛ս Հյուրբման Հ., ՀԲ, էջ 347, Աճառյան Հ., ՀԱԲ, հ. II, էջ 5, Զահուկյան Գ., ՀՄԲ, էջ 209-210:

51 Տե՛ս Աճառյան Հ., ՀԱԲ, հատ. II, էջ 6, Զահուկյան Գ., ՀՄԲ, էջ 210:

52 Տե՛ս Հյուրբման Հ., ՀԲ, էջ 441, Աճառյան Հ., ՀԱԲ, հատ. II, էջ 16, Զահուկյան Գ., ՀՄԲ, էջ 213, – **Гамкрелидзе Т., Иванов Вяч.**, նշվ. աշխ., էջ 764:

53 Տե՛ս Հյուրբման Հ., ՀԲ, էջ 442, Աճառյան Հ., ՀԱԲ, հատ. II, էջ 21-22, Զահուկյան Գ., ՀՄԲ, էջ 215, – **Гамкрелидзе Т., Иванов Вяч.**, նշվ. աշխ., էջ 517-518:

54 Տե՛ս Հյուրբման Հ., ՀԲ, էջ 443, Աճառյան Հ., ՀԱԲ, հատ. II, էջ 43, Զահուկյան Գ., ՀՄԲ, էջ 222:

թյուններ (հմմտ. **եղեմ** (< հուն. **ἔθεμ** «դրախտ» (< երբ. **’ēden**)) «դրախտ»⁵⁵, - **եկեղեցի** «ժողովուրդ. տաճար, եկեղեցի» (< հուն. **ἐκκλησία** «հավատացյալների հավաքույթ. տաճար, եկեղեցի») ⁵⁶, - **երակ** «երակ, արյան ուղի» (< մալթ. ***rak** «երակ» ձևից)⁵⁷ և այլն). 3) չստուգաբանվածներ (հմմտ. **երար** «լրացյալ հնություն»⁵⁸, - **եղար** I. «կին, ամուսնացած կին»⁵⁹, - **եշտոտի** «թեզանիք»⁶⁰ և այլն):

Ը.-ե. ծագման ինչպես **յե**- սկզբնաբաղադրիչով բառերի, այնպես էլ «յ նախդիր + ե ձայնավոր» կաղապարով բացառականի ձևերի առկայությունը բավարար հիմք է տալիս խոսելու հայերենում **յե** (ie) երկբարբառակերպի բնիկ լինելու մասին: Ըստ այդմ, այս երկբարբառակերպի առաջացումը ևս վերաբերում է հայերենի կազմավորման վաղ փուլերին: Ինչ վերաբերում է **յե**-ի առկայությանը **հայիմ** բայի կատարյալի ու 2-րդ ստորադասականի խոնարհման ձևերում, ապա միայն նշված բառաձևերի հիման վրա դժվար կլինեք որոշակի եզրակացություն անել, որովհետև այդ բայի ծագումը պարզ չէ: Թեպետև ենթադրվում է նրա բնիկ լինելը⁶¹, բայց դա միայն ենթադրություն է, որը դեռևս չի բացառում փոխառված լինելու հավանականությունը: Հետևաբար չի բացառվում նաև նշված բայի կազմում **յե** երկբարբառակերպի համեմատաբար ուշ առաջացած լինելու վարկածը⁶²:

Յի (ii) երկբարբառակերպը. 1) բառերի սկզբնաբաղադրիչ է (հմմտ. **յիղկ** «հղկված, ողորկ, հարթ», **յիմար** «խենթ, անմիտ», **յիսունք** «Ջատկից Հոգեգալուստ ընկած ժամանակամիջոցը», **յիշատակ** «յիշողություն, յիշում», **յիշել** «միտքը գալ, միտքը պահել», **յիսկաւոր** «միայնավոր», **յիսուն** «հիսուն»). 2) մասնակցում է **ա** լծորդության բայերի անց. անկ. ժ. չորս ձևերի կազմավորմանը (հմմտ. **ամայի** «(ես) թափում էի» (եզ. թ., 1-ին դ.), **ամայիր** (եզ. թ., 2-րդ դ.), **ամայիրք** (հզն. թ., 2-րդ դ.), **ամային** (հզն. թ., 3-րդ դ.). նույն կերպ՝ **դառնայի** «(ես) վերադառնում էի» (եզ. թ., 1-ին դ.) և այլն, - **իրկայի** «(ես) դիմանում էի» (եզ. թ., 1-ին դ.) և այլն, - **քարանայի** «քարանում էի» (եզ. թ., 1-ին դ.) և այլն. բացառություն են եզ. թ. 3-րդ դ. և

55 Տե՛ս **Հյուբժման Հ.**, ԸԲ, էջ 300, **Աճառյան Հ.**, ՀԱԲ, հատ. II, էջ 4, **Զահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 209:

56 Տե՛ս **Հյուբժման Հ.**, ԸԲ, էջ 347, **Աճառյան Հ.**, ՀԱԲ, հատ. II, էջ 12-13, **Զահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 211:

57 Տե՛ս **Հյուբժման Հ.**, ԸԲ, էջ 143, **Աճառյան Հ.**, ՀԱԲ, հատ. II, էջ 36, **Զահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 220:

58 Տե՛ս **Աճառյան Հ.**, ՀԱԲ, հատ. II, էջ 3, **Զահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 209:

59 Տե՛ս **Աճառյան Հ.**, ՀԱԲ, հատ. II, էջ 15, **Զահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 212:

60 Տե՛ս **Աճառյան Հ.**, ՀԱԲ, հատ. II, էջ 27, **Զահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 217:

61 Տե՛ս **Զահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 444:

62 Տե՛ս **Աճառյան Հ.**, ՀԱԲ, հատ. III, էջ 29:

հգն. թ. 1-ին դ. ձևերը, որոնցից առաջինն ունի -յր (հմմտ. **ամայր** «(նա) թափում էր»), իսկ մյուսը -յաք (հմմտ. **ամայաք** «(մենք) թափում էինք») վերջը. 3) **ի-** սկզբնաբաղադրիչով բառերի (գոյական, դերանուն) բացառական հոլովածի կազմավորմանը՝ իրենից ներկայացնելով «յ նախդիր + **ի** ձայնավոր» կաղապարը (հմմտ. **իժ** «իժերի ընտանիքի թունավոր օձ». **յիժէ** (եզ. թ.), **յիժից** (հգն. թ.),- **իմաստ** «միտք. ըմբռնելը». **յիմաստէ** (եզ. թ.), **յիմաստից** (հգն. թ.),- **իշխան** «տիրող. իշխանավոր». **յիշխանէ** (եզ. թ.), **յիշխանից** (հգն. թ.),- **ես** (անձն. դեր.). **յինէն** (եզ. թ.),- **ինքն** (անձն. դեր.). **յինքենէ** (եզ. թ.), **յինքեանց** (հգն. թ.),- **իրերաց** (փոխ. դեր., եզ. սեռ.). **յիրերաց** (հգն. թ.),- **իմ** (ստաց. դ.). **յիմմէ, յիմոց**:

Առաջին խմբի բառերը երեք կարգի են. ա) բնիկ հնդեվրոպական (հմմտ. **յիսուն** (< *penk^hekom^t- ձևից. սնսկ. pañčāçát-, ավ. pañčāsāt-, մպրսկ. pañčāh, հուն. πεντήκοντα, լատ. quinquāginta և այլն)⁶³). բ) փոխառություններ (հմմտ. **յիշատակ** (< իրան. փոխ., կապ ունի **յիշել** բայի հետ, սակայն, ըստ Հ. Աճառյանի, կազմությունը հնարավոր չէ հայերենով մեկնել)⁶⁴,- **յիշել** ((< իրան. փոխ., ըստ Հ. Աճառյանի՝ «նոյն է ուշ, յուշ բառի հետ և սրա հետ փոխառեալ է պիլ. գո. մի ձևից, որ աւանդուած չէ». ընդհանուր է քրդ. hiš-ի հետ))⁶⁵. բ) չստուգաբանված բառեր (հմմտ. **յիղկ, յիմար, յինուք, յիսկաւոր**)⁶⁶:

Վերոհիշյալ չորս բայերը, որոնց անկատարի ձևերում հանդիպում է **յի** (ii) երկբարբառակերպը, հ.-ե. ծագում ունեն: Հմմտ. **ամալ** «լցնել» (< *am- «լցնել». սնսկ. **ámatra** «աման, բաժակ, կուժ», հուն. ἄμα «դույլ», լատ. **hama, ama** «դույլ» և այլն),- **դառնալ** (< **դարձ** (< *d^hrg^h- խեթ. **tarna-**, թոխ. **A tarna-**, **tark-** «թողնել», ավր. **dreš** «դարձնել, ոլորել», **droša** (անց. կատ.), պրսկ. **darz(a)** «թել»)⁶⁷,- **տոկ(-ալ)** (< **տոկ** «դիմացկունություն, տնելը» (< *doxə- «հեռանալ, տարածում, տևողություն»)⁶⁸,- **քար(-ան-ամ)** (< **քար** (< *kar- «քար». արմատի կրկնությամբ՝ սնսկ. **karkara-** «կարծր, կոշտ», հուն. **κάρκαρος** «կարծր, անհարթ», **καρτερός** «ուժեղ, ամուր, պինդ» և այլն)⁶⁹:

Վերը կատարված քննությունը միանշանակ հիմք է տալիս ասելու, որ **յի** (ii) երկբարբառակերպը նույնպես հայերենում բնիկ է, որպես այդպիսին՝

63 Տե՛ս Հյուբշման Հ., ՀՔ, էջ 477, Աճառյան Հ., ՀԱԲ, հատ. III, էջ 400, Զահուկյան Գ., ՀՄԲ, էջ 553:

64 Տե՛ս Աճառյան Հ., ՀԱԲ, հատ. III, էջ 399, Զահուկյան Գ., ՀՄԲ, էջ 552-553:

65 Տե՛ս Հյուբշման Հ., ՀՔ, էջ 513, Աճառյան Հ., ՀԱԲ, հատ. III, էջ 399, Զահուկյան Գ., ՀՄԲ, էջ 553:

66 Տե՛ս Աճառյան Հ., ՀԱԲ, հատ. III, էջ 398-400, Զահուկյան Գ., ՀՄԲ, էջ 552-553:

67 Տե՛ս Աճառյան Հ., ՀԱԲ, հատ. I, էջ 639, Զահուկյան Գ., ՀՄԲ, էջ 189:

68 Տե՛ս Աճառյան Հ., ՀԱԲ, հատ. I, էջ 416-417, Զահուկյան Գ., ՀՄԲ, էջ 731-732:

69 Տե՛ս Աճառյան Հ., ՀԱԲ, հատ. I, էջ 558-560, Զահուկյան Գ., ՀՄԲ, էջ 778:

կազմավորվել է նախագրային հայերենի վաղ փուլերում, թերևս՝ վաղնջահայերենի ուշ վաղնջական ենթաշրջանում:

Յո (io)-ն հանդիպում է երկակի գործառույթով. 1) բառերի սկզբնաբաղադրիչ է. 2) **n-** սկիզբով բառերի (գոյականներ, դերանուններ) բացառականի հոլովաձևում ներկայացնում է «յ նախդիր + բառասկզբի **n-** ձայնավոր» կաղապարը:

Առաջին խմբի բառերը ծագումնաբանորեն երեք կարգի են. ա) բնիկ հնդեվրոպական բառեր (հմնտ. **յոգն** «շատ, շատերը» (< հ.-ե. ***og-ion**՝ ***g^hen**- «ուռչել, առատ լինել, լիություն».
հմնտ. հինդկ. **ghana** «առատ», լիով. **ganā** «բավականին») ⁷⁰, - **յոլով** «շատ, բազմաթիվ» (< հ.-ե. ***pol-eu**՝ ***pel-** «լցնել».
հմնտ. սնսկ. **purú-**, ավ. **pouru-** «լի, շատ, առատ», հուն. **πολύς** (< նիսհուն. ***παλύς**) «շատ», հիբլ. **il** «շատ», հւլավ. **paru** «առատ») ⁷¹, - **յորդ** «առատ, առատահոս» (< հ.-ե. ***ord^h-** ***er-**, ***or-** «շարժել, հուզել, բարձրացնել» արմատից՝ ***-d^h**- աձականով. հյ. արմատն ստացել է -յ նախածանցը. հմնտ. հուն. **όροθύνω** «գրգռել, հուզել») ⁷², - **յորձ** «ջրի առատ հոսանք» (< հ.-ե. ***ord^h-** ***or-**, ***er-** «շարժել, հուզել, բարձրացնել» արմատից. հոմանիշ է **յորդ** բառին) ⁷³, - **յորջորջ** «անուն, կոչում». կազմվել է **յորջ** արմատի կրկնությամբ, որն առանձին չի գործածվել (< հ.-ե. ***yer-** «հանդիսավոր ասել, խոսել» (հմնտ. ***yor-d^ho-** «խոսք») արմատից (?)) ⁷⁴. բ) փոխառություններ (հմնտ. **յորել** «հրեաների թողության տարին (ուշ) տարեդարձ, հորելյան» (< հուն. **ιώβηλος** (< եբր. **yōbēl-** «խոյ») ⁷⁵, - **յորելեան** (= հուն. **ιώβηλος, ιώβηλαϊος** «հորելյան». կազմվել է **յորել** ձևից՝ հյ. **-եան** մասնիկով) ⁷⁶, - **յորելի** I. «շամփրածն նշան» (< հուն. **ὄβελος** «ձեռագրերի մեջ սխալները նշանակող նշան». բուն իմաստով՝ «շամփուր».
սրանից է նաև լատ. **obelus** կամ **obeliskus** հոմանիշը) ⁷⁷, - **յորելի** II.

70 Տե՛ս **Ջահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 554: «Արմատականում» ստուգաբանված չէ (տե՛ս **Աձառյան Հ.**, ՀՄԲ, III, էջ 402), իսկ հ. Պեդերսընը միացրել է **յաձախ** բառի հետ՝ յ-ն համարելով նախադրություն (տե՛ս **Պեդերսըն Հ.**, Հայերէն եւ դրացի լեզուները, Վիեննա, 1907, էջ 62):

71 Տե՛ս **Աձառյան Հ.**, ՀՄԲ, հատ. III, էջ 402-403, **Ջահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 554:

72 Տե՛ս **Ջահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 555: «Արմատականում» ստուգաբանված չէ (տե՛ս **Աձառյան Հ.**, ՀՄԲ, III, էջ 407):

73 Տե՛ս **Ջահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 556, **Աձառյան Հ.**, ՀՄԲ, հատ. III, էջ 408:

74 Տե՛ս **Ջահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 556, **Աձառյան Հ.**, ՀՄԲ, հատ. III, էջ 408: Գ. Ջահուկյանը առնչություն է տեսնում երդումն բառի հետ, սակայն «հնչյունական հարաբերությունը պարզ չէ» (նույն տեղում):

75 Տե՛ս **Հյուբշման Հ.**, ՀՔ, էջ 366, **Ջահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 552:

76 Տե՛ս **Աձառյան Հ.**, ՀՄԲ, հատ. III, էջ 401:

77 Տե՛ս **Հյուբշման Հ.**, ՀՔ, էջ 367, **Աձառյան Հ.**, ՀՄԲ, հատ. III, էջ 402, **Ջահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 553:

«եղջերափող» (< եբր. **yōbēl** «փող, շեփոր») ⁷⁸, - **յոբելիկ** «կոթող» (< հուն. **ὀβελίσκος** «կոթող» (բուն իմաստով՝ «փոքր շամփուր»)) ⁷⁹, - **յովազ** «գիշատիչ մի գազան» (< մալթ. ***yavaz**, պր. **yōz** «հովազ») ⁸⁰, - **յովտ** «եբրայական այբուբենի ամենափոքր տառանշանը՝ յ-ի արտասանությամբ» (< հուն. **ἰὼτα** (< եբր. **yōd**). հուն. **ι** գրի անվանումը) ⁸¹. գ) չստուգաբանված բառեր (հմնտ. **յոխորտ** «հոխորտ, խրոխտ, հանդուգն» ⁸², - **յողալ** «ծուլանալ, պարապ նստել, այս ու այնտեղ նայել». հոմանիշ է **յոյլ**-ին «ծույլ, դանդաղաշարժ» ⁸³, - **յորալ** «մտահոգվել, մտատանջվել, նեղվել» ⁸⁴, - **յորսայս** «գետնատարած, պտկած». «կազմված է ***որս** արմատից, որ պիտի նշանակեր «մեջք. թիկունք» ⁸⁵:

Երկրորդ խմբի բառերից են հետևյալները. **ոգի** «շունչ. կյանք». **յոզույ** «ոգուց» (եզ. թ.), **յոզուց** «ոգիներից» (հզն. թ.), - **ողբ** «լացուկոծ, սուգ ու շիվան». **յողբոյ** «ողբից» (եզ. թ.), **յողբոց** «ողբերից» (հզն. թ.), - **ոչինչ** «չգոյություն. ոչ մի բան». **յոչնչէ** «ոչնչից» (եզ. թ.), - **ոսկի** «դեղնագույն ազնիվ մետաղ». **յոսկույ** «ոսկուց» (եզ. թ.), **յոսկուց** «ոսկիներից» (հզն. թ.), - **ոսկր** «ոսկոր». **յոսկերէ** «ոսկրից» (եզ. թ.), **յոսկերց** «ոսկորներից» (հզն. թ.), - **ոստ** «(ծառի) ձյուղ». **յոստոյ** «(ծառի) ձյուղից» (եզ. թ.), **յոստոց** «(ծառի) ձյուղերից» (հզն. թ.), - **ոստան** «մայրաքաղաք. արքունական կավածք». **յոստանէ** «մայրաքաղաքից» (եզ. թ.), **յոստանից** «մայրաքաղաքներից» (հզն. թ.), - **ոտն** «ոտք. հետք, ոտնատեղ». **յոտանէ** «ոտքից» (եզ. թ.), **յոտից** «ոտքերից» (հզն. թ.), - **որ** (հարաբ. դեր.). **յորմէ** «ումից» (եզ. թ.), **յորոց** «որոնցից» (հզն. թ.), - **որդի** «որդի, զավակ». **յորդույ** «որդուց» (եզ. թ.), **յորդուց** «որդիներից» (հզն. թ.), - **որմ** «պատ». **յորմոյ** «պատից» (եզ. թ.), **յորմոց** «պատերից» (հզն. թ.):

Այս խմբի բառերի մեծ մասն ունեն հնդեվրոպական ծագում (հմնտ. **ոգի** (/հոգի) «շունչ. կյանք» (< ***pou̯iō-**՝ ***pəu-**, ***pau-** «փչել, ուռչել». հմնտ. սնսկ.

78 Տե՛ս Աճառյան Լ., ՀԱԲ, հատ. III, էջ 402, Զահուկյան Գ., ՀՄԲ, էջ 554:

79 Նույն տեղում:

80 Տե՛ս Հյուբշման Լ., ՀԲ, էջ 199, Աճառյան Լ., ՀԱԲ, հատ. III, էջ 406-407, Զահուկյան Գ., ՀՄԲ, էջ 555:

81 Տե՛ս Աճառյան Լ., ՀԱԲ, հատ. III, էջ 407:

82 Տե՛ս Աճառյան Լ., ՀԱԲ, հատ. III, էջ 402-403, Զահուկյան Գ., ՀՄԲ, էջ 554:

83 Տե՛ս Աճառյան Լ., ՀԱԲ, հատ. III, էջ 402-403: Գ. Զահուկյանը հնարավոր է համարել **յոյլ**-ի ծագումը հ.-ե. ***solio-**՝ ***sel-** «սողալ, սողոսկել» նախաձևից. հմնտ. հինդկ. **sarati**, հիդլ. **selid** «սողում է, սողոսկում է», լիտվ. **seleti** «սողոսկել, դանդաղ շարժվել» (տե՛ս Զահուկյան Գ., ՀՄԲ, էջ 554):

84 Տե՛ս Աճառյան Լ., ՀԱԲ, հատ. III, էջ 407, Զահուկյան Գ., ՀՄԲ, էջ 555:

85 Տե՛ս Աճառյան Լ., ՀԱԲ, հատ. III, էջ 408: Գ. Զահուկյանը չի բացատրել կապը հ.-ե. ***perk-** «կող» արմատի հետ. հմնտ. **ընկողմանիմ** «պատկել» (տե՛ս Զահուկյան Գ., ՀՄԲ, էջ 556):

ániti «շնչել», հուն. **άνεμος** «քամի», լատ. **animus** «ոգի, հոգի», գոթ. **us-anan** «հևալ» և այլն⁸⁶, - **ողբ** «լացուկոծ, սուգ ու շիվան» (< ***ol-b^h** ***el-**, ***ol-**. հմնտ. հուն. **όλοφύρομαι** «ողբալ, հեծել», լիտվ. **ulbauti** «կանչել, երգել») ⁸⁷, - **ոսկր** «ոսկր» (< ***ost-ko-**, ***ostger'** ***ost^(h)**- «ոսկր» . հմնտ. ավ. **asti** «սրունքոսկր», հինդկ. **asthi-**, հուն. **όστέον**, խեթ. **nastai-** «ոսկր» և այլն⁸⁸, - **ոստ** «(ծամի) ձյուղ» (< ***ozdo-s-** «ձյուղ, ոստ» . հմնտ. գոթ. **asts**, հ. վ. գերմ. **ast** «ձյուղ», հուն. **ὄζος** «ձյուղ, ոստ, գավազան» և այլն⁸⁹, - **ոսք** «ոսք. հետք, ոտնատեղ» (< ***pod-m-** ***pod-**, ***ped-**. հմնտ. սասկ. **pād-** (/pad-), ավ. **paδ-** «ոսք», հուն. **πούς** (սեռ. **ποδός**) «ոսք», լատ. **pēs** (սեռ. **pedis**) «ոսք», գոթ. **fōtus** «ոսք» և այլն⁹⁰ և այլն): Հատկապես այսքան թվով բնիկ բառերի առկայության պարագայում այլևս ավելորդ է փոխառությունների և չստուգաբանվածների խնդրին անդրադառնալը:

Վերը կատարված քննությունը հիմք է տալիս ասելու, որ **յո** երկբարբառակերպը ևս բնիկ է հայերենում. այն նույնպես առաջացել է հայերենի կազմավորման վաղ փուլերում, երբ ձևավորվում էին հայերենի քերականական կառուցվածքի յուրահատկությունները:

2. Իրանական ազդեցությամբ կազմավորված երկբարբառակերպերը

Հին հայերենում երկբարբառակերպեր են առաջացել նաև իրանական փոխառությունների որոշ հնչյունակապակցությունների հնչյունական օրինաչափ փոփոխությունների արդյունքում: Դրանք են:-

Իէ (ւթ) երկբարբառակերպը հանդիպում է բացառապես իրանական փոխառություններում (հմնտ. **ապաւէն** «ապաստան. վստահելի մարդ» (< իրան. ***apa-vēn**). ավ. **apa-** (հյ. **ապա-**) և **vaēna-** «նայել», հայրսկ. **vaina** «նայել, տեսնել», մպրսկ. **vēn** «տեսողություն»⁹¹, - **յաւէթ (յաւէրթ)** «միշտ, ամեն ժամանակ» (< մպրսկ. ***yāvēž** ձևից). ավ. **yavaēji** «հավերժակյաց»⁹², -

86 Տե՛ս Աճառյան Հ., ՀԱԲ, հատ. III, էջ 107-108, Զահուկյան Գ., ՀՄԲ, էջ 464:

87 Տե՛ս Աճառյան Հ., ՀԱԲ, հատ. III, էջ 553, Զահուկյան Գ., ՀՄԲ, էջ 600:

88 Տե՛ս Հյուբշման Հ., ՀՔ, էջ 482, Աճառյան Հ., ՀԱԲ, հատ. III, էջ 567, Զահուկյան Գ., ՀՄԲ, էջ 604:

89 Տե՛ս Հյուբշման Հ., ՀՔ, էջ 482, Աճառյան Հ., ՀԱԲ, հատ. III, էջ 568, Զահուկյան Գ., ՀՄԲ, էջ 604:

90 Տե՛ս Հյուբշման Հ., ՀՔ, էջ 482, Աճառյան Հ., ՀԱԲ, հատ. III, էջ 83-84, Զահուկյան Գ., ՀՄԲ, էջ 605:

91 Տե՛ս Աճառյան Հ., ՀԱԲ, հատ. I, էջ 233, Զահուկյան Գ., ՀՄԲ, էջ 68-69:

92 Տե՛ս Հյուբշման Հ., ՀՔ, էջ 198, Աճառյան Հ., ՀԱԲ, հատ. III, էջ 391-392, Զահուկյան Գ., ՀՄԲ, էջ 550:

յաւէտ «ավելի, շատ». ավ. **havaētāt** «հավիտենություն». մայրսկ. **yāvēt** «ավելի շատ, միշտ, հավիտյան» բառից, պրսկ. **yāvēd**⁹³, - **հրաւէր** «հրավեր, կոչ» (< իրան. ***fravēd**). ավ. **fravaēd**- «նկատել», սողդ. **prw’yō (frawēd)** «խուզարկել, հրավիրել». ըստ Հ. Աճառյանի՝ հայերեն բառը փոխառություն է պահլավերենի (իմա՝ մայրսկ.՝ Վ.Պ.) ***fravēd**-ից, որը գրավոր հուշարձաններում վկայված չէ)⁹⁴: Բոլոր ձևերի հիմքն է ավ. **vaēd**-, **vaēdayeiti** «գիտենալ, գիտցնել»՝ **fra**- նախամասնիկով⁹⁵:

Հյ. **ւէ** (ւե)–ի իրանական համարժեքներն են **vē**, **vai**, **vaē**, **w’y**, **wē** հնչյունակապակցությունները, որոնցից հիմնական կարող են լինել հատկապես **vē**, **vai**, **vaē** ձևերը: Ակնհայտ է, որ **ւէ** (ւե) երկբարբառակերպը հայերենում ձևավորվել է իրանական փոխառությունների ներգործությամբ, հետևաբար նրա առաջացումը վերաբերում է իրանական փոխառությունների շրջանին, ընդհանուր առմամբ՝ մ.թ.ա. IV–ից մինչև մ.թ. III դդ. ժամանակահատվածին:

իի (յի) երկբարբառակերպը հանդիպում է սակավաթիվ բառերում, որոնք կամ ամբողջական ձևով իրանական փոխառություններ են (հմմտ. **հրաւիրակ** (< իրան. ***fravēdak**), **հրաւիրան** (< իրան. ***fravēdan**)), կամ էլ իրանական փոխառություններից բաղադրված կազմություններ (հմմտ. **յաւիտեանս** «հավիտենապես». կազմված է «**յաւէտ** (< մայրսկ. **yāvēt**) > **յաւիտ** + **եան** + **ս**) կաղապարով. **յաւիտեան**–ի «մշտնջենավոր» հզն. հյց. հլ., **յաւիտենից** «**յաւէտ** (< մայրսկ. **yāvēt**) > **յաւիտ** + (**եան** >) **են** + **ի** + **ց**» կաղապարով. **յաւիտեան**–ի «մշտնջենավոր» հզն. բցո. հլ.: Երկուսը միասին ավ. **yavaēča yavaetā-taēča**–ի համարժեքն են՝ «յաւիտեանս յաւիտենից»–ի նշանակությամբ)⁹⁶: Թեպետև **իի** (յի)–ն հանդիպում է միայն իրանական փոխառություններում և դրանց հիմքից կազմված հայկական բաղադրություններում, սակայն, լինելով իրան. **vē** > հյ. (**ւէ**) > **իի** (յի) հնչյունափոխության արդյունք, այն հայերենի բառակազմական գործընթացներով պայմանավորված իրողություն է:

Ըստ ամենայնի, **իի** (յի) երկբարբառակերպը ևս առաջացել է հայերենի նախագրաբարյան փուլում, մասնավորապես՝ իրանական փոխառությունների շրջանում:

93 Տե՛ս Հյուբշման Հ., ՀԲ, էջ 198, Աճառյան Հ., ՀԱԲ, հատ. III, էջ 391–392, Զահուկյան Գ., ՀՄԲ, էջ 550:

94 Տե՛ս Հյուբշման Հ., ՀԲ, էջ 183, Աճառյան Հ., ՀԱԲ, հատ. III, էջ 133, Զահուկյան Գ., ՀՄԲ, էջ 471, Զահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 531:

95 Տե՛ս Աճառյան Հ., ՀԱԲ, հատ. III, էջ 133:

96 Տե՛ս Աճառյան Հ., ՀԱԲ, հատ. III, էջ 133–134:

Եզրակացություններ

Սույն քննությունը հիմք է տալիս անելու հետևյալ եզրահանգումները. 1) վերոհիշյալ երկբարբառակերպերից յոթը՝ **ւա** (ւա), **ւե** (ւե), **ւո** (ւօ), **յա** (յա), **յե** (յե), **յի** (յի), **յո** (յօ), սկիզբ են առնում ընդհանուր հնդեվրոպական լեզվից, բայց ոչ՝ հիմք-լեզվի երկբարբառային համակարգից. դրանց նախաձևերը տարբեր հնչյունակապակցություններ (իմա՝ հնչույթակապակցություններ) են՝ ձայնավորական, ձայնորդական և բաղաձայնական բաղադրիչներով, որոնց՝ հայերենում կրած օրինաչափ հնչյունական փոփոխությունները հանգեցրել են երկբարբառակերպերի առաջացման. 2) երկուսը՝ **ւէ** (ւէ)-ն և **ւի** (ւի)-ն, ձևավորվել են իրանական փոխառությունների ուժեղ ներգործությամբ. 3) հ.-ե. նախաձևեր ունեցող բոլոր յոթ երկբարբառակերպերը, ըստ ամենայնի, կազմավորվել են հայերենի՝ որպես ինքնուրույն լեզու ձևավորվելու վաղ փուլերում, թերևս՝ վաղնջահայերենում. 4) իրանական փոխառությունների ազդեցությամբ կազմավորվածներն ընդհանուր առմամբ պիտի առաջացած լինեն այդ փոխառությունների կատարման շրջանում, ըստ ամենայնի՝ մ.թ.ա. 1-ին հազարամյակի կեսերից ոչ շուտ:

Վարդան Զ. Պետրոսյան – հետաքրքրությունների ոլորտում են լեզվի տեսության, պատմահամեմատական լեզվաբանության, ընդհանուր և հայ հնչույթաբանության հարցերը: Հեղինակ է 2 գրքի և ընդհանուր լեզվաբանական ու հայերենագիտական 60-ից ավելի հոդվածների:

Էլ. հասցե՝ vz.petrosyan@ysu.am

Summary

DIPHTHONGOIDS WITH NON-DIPHTHONGAL ORIGIN IN OLD ARMENIAN

(diachronic and achronic aspects)

Vardan Z. Petrosyan

PhD in Philological Sciences

Key words: diphthongoids, base-language, non-diphthongal prototype, Iranian borrowings, Proto Armenian, phonetic change, phonemic combination, Armenian Studies, diachronism, achronism

Only one of the diphthongoids that has undergone y diachronic and achronic examination in the current article - *ւո* (ւօ), has so far been distinguished in Armenian

Studies as a diphthong (a diachronic aspect). The others - **լա** (ʎa), **լե** (ʎe), **լէ** (ʎē), **լի** (ʎi), **լա** (ja), **լե** (je), **լի** (ji), **լо** (jo), have been identified and investigated as diphthongs for the first time.

Considering the linguistic ambience where each diphthong expresses itself, i.e. the word or the morpheme within which the given diphthong functions, as well as the native or borrowed nature of the given unit and its simple or compound structure, an attempt has been made to reveal the prototype of the given diphthong and the approximate time of its formation.

Further examination reveals that seven of the diphthongs **լա** (ʎa), **լե** (ʎe), **լо** (ʎo), **լա** (ja), **լе** (je), **լи** (ji), **լо** (jo) have their IE prototypes, i.e. derive from the IE base-language, hence, are native Armenian structures.

However, their prototypes are not diphthongs as expected. Rather, they are combinations of vowels, sonorants and consonants whose regular phonetic changes have resulted in the formation of diphthongs in Armenian.

Two other diphthongs - **լէ** (ʎē)-**ի** and **լի** (ʎi) have developed under the strong influence of Iranian borrowings since they are encountered only among Iranian borrowings and are the result of phonetic changes typical of shifts from Iranian languages into Armenian. The diphthongs deriving from the IE base-language, most probably, were developed in the stage of Proto Armenian, when Armenian started to develop as a separate and independent language following the break-away from the IE language. The diphthongs encountered among Iranian borrowings could develop not earlier than in the middle of the first millennium BC, since, according to historical records, mass and direct interaction of the Armenian ethnic people with the ancient Iranian peoples started at that time.

Резюме

ДИФТОНГОИДЫ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА, НЕ ИМЕЮЩИЕ ДИФТОНГИЧЕСКОГО ПРОИСХОЖДЕНИЯ

(диахронический и ахронический аспект)

Вардан З. Петросян
Кандидат филол. наук

Ключевые слова – дифтонгоиды, язык-основа, недифтонгная праформа, иранское заимствование, раннеармянский, фонетическое изменение, фонемосочетание, армяноведение, диахрония, ахрония.

Из рассматриваемых в данной статье в диахроническом и ахроническом аспекте дифтонгоидов лишь один – **լի** [ʎo], в армяноведении выделяется как

дифтонг (синхронический аспект), другие: **աա** [ʷa], **աբ** [ʷe], **աբ** [ʷē], **աի** [ʷi], **ախ** [ʷa], **աե** [ʷe], **աի** [ʷi], **աո** [ʷo], как таковые, изучаются впервые. Принимая за основу факторы языковой среды проявления каждого дифтонгоида, т.е. слово или морфему, в составе которых встречается данный дифтонгоид, исконность или заимствованность данной единицы, ее простую или составную структуру, нами делается попытка выявить исконную праформу дифтонгоида и приблизительное время его образования. Исследование показывает, что семь из дифтонгоидов: **աա** [ʷa], **աբ** [ʷe], **աի** [ʷi], **ախ** [ʷa], **աե** [ʷe], **աի** [ʷi], **աո** [ʷo] имеют индоевропейские праформы, т.е. берут начало из индоевропейского языка-основы, следовательно, имеют исконно армянские образования. Однако их праформы являются не дифтонгами, как ожидалось, а сочетаниями гласных, сонорных и согласных фонем, закономерные звуковые изменения которых привели к образованию дифтонгов в армянском языке. Два других – **աբ** [ʷē] и **աի** [ʷi] образовались под сильным влиянием иранских заимствований, т.к. они встречаются только в иранских заимствованиях и являются результатом фонетических изменений, свойственных переходу *иранские языки* > *армянский язык*. Дифтонгоиды, возникшие из индоевропейского языка-основы, по-видимому, сформировались на этапе раннеармянского языка, когда после отделения от индоевропейского языка начинается процесс формирования армянского языка как самостоятельного. Дифтонгоиды второго типа, проявляющиеся в иранских заимствованиях, могли возникнуть не раньше, чем в середине первого тысячелетия до н.э., т.к. согласно историографическим данным, непосредственное и массовое общение армянского этноса с древними иранскими народами берет начало именно в этот период.

Օգտագործված գրականություն

1. **Արրահամյան Ա.**, Գրաբարի ձեռնարկ, Եր., «Լույս», 1976:
2. **Առաքելեան Վ.**, Գրաբարի քերականություն, Եր., «Վիամիր», 2010:
3. **Աճառյան Հ.**, Հարերեն արմատական բառարան, հատ. I-IV, Եր., ԵՀՀ, 1971-1979:
4. **Հյուրջման Հ.**, Հայերենի քերականություն, Եր., ԵՀՀ, 2003:
5. **Պեղերսըն Հ.**, Հայերեն եւ դրացի լեզուները, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1907:
6. **Պետրոսյան Վ.**, Հ.-ե. կոկորդայինների տեսությունը և հին հայերենի խուլ շփական Հ (H)-ի հնչարանական բնութագրերը (սպաժամանակյա և տա-րաժամանակյա հայեցակետեր), Հայագիտության հարցեր, 2022, N 1, էջ 189-208:

7. **Պետրոսյան Վ.**, Հին հայերենի երկբարբառային և եռաբարբառային կազմությունների հարցի շուրջ (համաժամանակյա հայեցակերպ), ԲԵՀ. Բանասիրություն, 2023, N 1, էջ 57–67:
8. **Պետրոսյան Վ.**, Հին հայերենի **ւ** (յ) ձայնորդի համաժամանակյա և տարածամանակյա բնութագրերը, ԲԵՀ. Բանասիրություն, 2017, N 3, էջ 11-22:
9. **Ջահուկյան Գ.**, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., «Ասողիկ», 2010:
10. **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987:
11. **Гамкрелидзе Т., Иванов Вяч.**, Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Тбилиси, ИТУ, 1984.
12. **Красухин К.**, Введение в индоевропейское языкознание, М., «Академия», 2004.
13. **Мейе А.**, Введение в сравнительное изучение в индоевропейских языков, М.–Л., ГСЭИ, 1938.
14. **Петросян В.**, Происхождение в древнеармянском языке сонорного звука **յ**(**y**) и его фонематическая значимость (исторический аспект), *European journal of Humanities and Social Sciences*, 2017, N 5, с. 24–29.
15. **Савченко А.**, Сравнительная грамматика индоевропейских языков, М., «Высшая школа», 1974.
16. **Селищев А.**, Старославянский язык, ч. 1, М., ГУПИ, 1951.
17. **Семереньи О.**, Введение в сравнительное языкознание, М., «Прогресс», 1980.
18. **Туманян Э.**, Древнеармянский язык, М., «Наука», 1971.
19. **Meillet A.**, Esquisse d'un grammaire comparée de l'arménien classique, Vienne, Imprimerie des PP. Mekhitharistes, 1936.

REFERENCES

1. **Abrahamyan A.**, Grabari dzer'nark, Yer.,1976 (**In Armenian**).
2. **Ačar'yan H.**, Hayeren armatakan ba'aran, Yer., hat. I-IV, 1971-1979 (**In Armenian**).
3. **Ar'ak'elyan V.**, Grabari k'erakanut'yun, Yer., 2010 (**In Armenian**).
4. **Gamkrelidze T., Ivanov Vyach.**, Indoevropskiy yazyk i indoevropytsy, Tbilisi, t. II, 1984 (**In Russian**).
5. **Dzhahukyan G.**, Hayeren stugabanakan ba'aran, Yer., 2010 (**In Armenian**).
6. **Dzhahukyan G.**, Hayoc' lezvi patmut'yun: nakhagrayin zhamanakashrdzhan, Yer., 1987 (**In Armenian**).
7. **Krasukhin K.**, Vvedenie v indoevropskoe yazëkoznanie, M., 2004 (**In Russian**).
8. **Hyubshman H.**, Hayereni k'erakanut'yun, Yer., 2003 (**In Armenian**).
9. **Meillet A.**, Esquisse d'un grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936 (**In French**).
10. **Meye A.**, Vvedenie v sravnitel'noe izuchenie v indoevropskikh yazëkov, M.-L., 1938 (**In Russian**).
11. **Pedersen H.**, Hayerēn yev drac'i lezunerē, Vienna, 1907 (**In Armenian**).
12. **Petrosyan V.**, Hin hayereni **ւ** (**y**) dzaynordi hamazhamanakya yev tarazhamanakya bnut'agrery // BEH. Banasirut'yun, 2017, N 3, ëdzh 11-22 (**In Armenian**).

13. **Petrosyan V.**, Proiskhozhdenie v drevnearmyanskom yazyke sonornogo zvuka *j*(y) i yego phonematicallye znachimost' (istoricheskiy aspekt) // *European journal of Humanities and Social Scienses*, 2017, N 5, c. 24-29 (**In Russian**).
14. **Petrosyan V.**, H.-e. kokordayinneri tesut'yuně yev hin hayereni khul shp'akan < (H)-h hchabanakan bnut'agrerě (apazhamanakya yev tarazhamanakya hayec'aketer), *Hayagitutyan harcer*, 2022, 1, ědzh 189-208 (**In Armenian**).
15. **Petrosyan V.**, Hin hayereni erkbarbarayin yev erabarbarayin kazmut'yunneri hare'i shurdzh (hamazhamanakya hayec'akerp) // *BEH. Banasirut'yun*, 2023, N 1, ědzh 57-67 (**In Armenian**).
16. **Savchenko A.**, *Sravnitel'naya grammatika indoevropskih yzěkov*, M., 1974 (**In Russian**).
17. **Selischev A.**, *Staroslavjanskiy yazěk*, ch. I, M., 1951 (**In Russian**).
18. **Semeren'i O.**, *Vvedenie v sravnitel'noe yazěkoznanie*, M., 1980 (**In Russian**).
19. **Tumanyan Ē.**, *Drevnearmyanskiy yazěk*, M., 1971 (**In Russian**).